ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

ք.Երևան, Մամիկոնյանց 46/5

«02» 08 2018թ. N_____

ՀՀ ոստիկանության պետ,
ոստիկանության գնդապետ
Վ.Օսիպյանին

Հարգելի՛ պարոն Օսիպյան,

ՀՀ Նախագահի կողմից 2017թ. հոկտեմբերի 11-ին ստորագրված «Քրեական գործերով իրեղեն ապացույցներ հանդիսացող թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց բաղադրիչների, հրազենի, դրա հիմնական մասերի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի և պայթուցիկ սարքերի փոխանցման կարգի մասին» արձանագրության վավերացումը ՀՀ քննչական կոմիտեն գտնում է նպատակահարմար:

Հարգանքով՝
Արդարադատության առաջին դասի
խորհրդական Հ.Գրիգորյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Վեբ կայք՝ www.minfin.am, ֆինսախ.հայ
Էլ. փոստ՝ secretariat@minfin.am
Հեռ.՝ (+374 11) 800 156

N _____

<<_____>> _____20 թ.

ՀՀ ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ի պատասխան ՀՀ ոստիկանության՝
ս.թ. մարտի 29-ի թիվ 01/2/8386-19 գրության

«Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ կից տրամադրում ենք «Քրեական գործերով իրեղեն ապացույց հանդիսացող թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց բաղադրիչների, հրազենի, դրա հիմնական մասերի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի և պայթուցիկ սարքերի փոխանցման կարգի մասին» արձանագրության վերաբերյալ մեր եզրակացությունը:

Առդիր՝ 2 էջ:

ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Կատարող՝ Տաթև Աշչյան
Միջազգային համագործակցության վարչություն
Հեռ.՝ 011 800 322

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Վեբ կայք՝ www.minfin.am, ֆինախ.հայ
Էլ. փոստ՝ secretariat@minfin.am
Հեռ.՝ (+374 11) 800 156

N _____

<<_____>> _____20 թ.

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«Քրեական գործերով իրեղեն ապացույց հանդիսացող թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց բաղադրիչների, հրազենի, դրա հիմնական մասերի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի և պայթուցիկ սարքերի փոխանցման կարգի մասին» արձանագրության՝ Հայաստանի Հանրապետության համար ֆինանսական պարտավորություններ նախատեսող դրույթների առկայության մասին

«Քրեական գործերով իրեղեն ապացույց հանդիսացող թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց բաղադրիչների, հրազենի, դրա հիմնական մասերի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի և պայթուցիկ սարքերի փոխանցման կարգի մասին» արձանագրության (այսուհետ՝ Արձանագրություն) 4-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Կողմերն իրենց իրավասու մարմինների միջոցով կատարվող հարցումով պարտավորվում են միմյանց փոխանցել իրեղեն ապացույցներ՝ հարցում ուղարկող Կողմի քրեական դատավարության ընթացքում օգտագործելու համար:

Արձանագրության 9-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր Կողմ հարցումն իրականացնելու ընթացքում ապահովում է փոխանցվող տեղեկույթի գաղտնիությունը և իրեղեն ապացույցների անվտանգության պաշտպանությունը:

Արձանագրության 10-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ իրեղեն ապացույցների փոխանցումը կատարվում է Կողմերի իրավասու մարմինների կողմից՝ Արձանագրությանը կից 1-ին հավելվածով սահմանված կարգով: Նշված հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ փոխանցման ժամանակ իրեղեն ապացույցները պետք է փաթեթավորել՝ ապահովելով դրանց անվնաս և անվտանգ տեղափոխումը՝ հարցում ստացող Կողմի ազգային օրենսդրության համաձայն:

Արձանագրության 13-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Արձանագրության կատարման ընթացքում Կողմերը ծախսերը կատարում են ինքնուրույն, եթե յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համար այլ կարգ չի համաձայնեցվում:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ Արձանագրությամբ սահմանված ԱՊՀ շրջանակներում քրեական գործերով իրեղեն ապացույց հանդիսացող թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց բաղադրիչների, հրազենի, դրա հիմնական մասերի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի և պայթուցիկ սարքերի փոխանցումը ենթադրում է Հայաստանի Հանրապետության համար ֆինանսական պարտավորությունների առաջացում, հետևաբար նաև պետական բյուջեի ծախսերի ավելացում:

Միաժամանակ Արձանագրությունում եկամուտների նվազեցում նախատեսող դրույթներ առկա չեն:

ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐ

N .....

«.....» .....2019 թ.

ՀՀ ոստիկանության պետ Վ.ՕՍԻՊՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Օսիպյան

Ի պատասխան Ձեր 2019 թվականի մարտի 29-ի թիվ 01/2/8387-19 գրության՝ տեղեկացնում եմ, որ «Քրեական գործերով իրեղեն ապացույց հանդիսացող թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց բաղադրիչների, հրազենի, դրա հիմնական մասերի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի և պայթուցիկ սարքերի փոխանցման կարգի մասին» Արձանագրության վավերացման վերաբերյալ առարկություն չունեմ:

Invalid signature

X

Hakob Arshakyan

Հարգանքով՝ Signed by: ARSHAKYAN HAKOB 2604850273 **Հ.ԱՐՇԱԿՅԱՆ**

Կատ.՝ իրավաբանական վարչություն 010 590026

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 60) 80 80 03
էլ. փոստ minister@moh.am

_____N _____

Ձեր N _____

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ
ՊԱՐՈՆ ՎԱԼԵՐԻՅ ՕՍԻՊՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Օսիպյան

Ի պատասխան Ձեր 29.03.2019թ. թիվ 01/2/8388-19 գրության՝ հայտնում եմ, որ «Քրեական գործերով իրեղեն ապացույց հանդիսացող թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց բաղադրիչների, հրազենի, դրա հիմնական մասերի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի և պայթուցիկ սարքերի փոխանցման կարգի մասին» արձանագրության վերաբերյալ «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով նախատեսված եզրակացության տրամադրումը դուրս է Առողջապահության նախարարության իրավասությունից:

Միաժամանակ հայտնում եմ, որ նշված արձանագրության հաստատման/վավերացման վերաբերյալ առաջարկներ չկան:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Invalid signature

X

VERIFIED OCSP 4/3/2019 18:02:13 GMT+4

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360

Կատարող՝ Իրավաբանական վարչություն
Կարինե Աբրահամյան
Հեռ.՝ 060 80 80 03 (1611)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

0010 Երևան, Վ.Սարգսյան 3/8, հեռ. 594-004
էլ. փոստ info@moj.am

N _____

«____» _____201 թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ
ՊԱՐՈՆ ՎԱԼԵՐԻՅ ՕՍԻՊՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Օսիպյան

Ի պատասխան Ձեր 2019թ. մարտի 29-ի թիվ 01/2/8382-19 և համաձայն «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի դրույթների՝ Ձեզ ենք ներկայացնում «Քրեական գործերով իրեղեն ապացույց հանդիսացող թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց բաղադրիչների, հրազենի, դրա հիմնական մասերի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի և պայթուցիկ սարքերի փոխանցման կարգի մասին» արձանագրությունում Հայաստանի Հանրապետության օրենքին հակասող, օրենքի փոփոխություն կամ նոր օրենքի ընդունում նախատեսող նորմերի, ինչպես նաև վերոնշյալ արձանագրությունը վավերացման ենթակա դարձնող հիմքերի առկայության մասին Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության եզրակացությունը:

Առդիր՝ 1 էլ. ֆայլ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԱՐՏԱԿ ԶԵՅՆԱԼՅԱՆ**

Invalid signature

X

Artak Zeynalyan

ՀՀ ԱՆ միջազգային իրավական
համագործակցության վարչություն
Հեռ. (010) 594-176

Արդարադատության
Նախարարություն

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

«ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԻՐԵՂԵՆ ԱՊԱՑՈՒՅՑ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ, ՀՈԳԵՄԵՏ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ, ՀՐԱԶԵՆԻ, ԴՐԱ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍԵՐԻ, ՌԱԶՄԱՄԹԵՐՔԻ, ՊԱՅԹՈՒՑԻԿ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ՊԱՅԹՈՒՑԻԿ ՍԱՐՔԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻՆ ՀԱԿԱՍՈՂ, ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ՆՈՐ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՈՂ ՆՈՐՄԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԴԱՐՁՆՈՂ ՀԻՄՔԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Արձանագրությունը չի պարունակում Հայաստանի Հանրապետության օրենքին հակասող, օրենքի փոփոխություն կամ նոր օրենքի ընդունում նախատեսող նորմեր:

Միաժամանակ հայտնում ենք, որ Արձանագրությունը ենթակա է վավերացման ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ համաձայն ՀՀ Սահմանադրության 116-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի դրույթների հիմքով:

Իրավական ակտերի փորձաքննության
գործակալության պետ՝ Կ. ԽՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

«____» _____ 201 թ.

No _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ
ՊԱՐՈՆ ՎԱԼԵՐԻՅ ՕՍԻՊՅԱՆԻՆ

Ի պատասխան ՀՀ Ոստիկանության 29.03.2019 թվականի
թիվ 01/2/8384-19 գրության

Հարգելի պարոն Օսիպյան

Հայտնում ենք, որ «Քրեական գործերով իրեղեն ապացույց հանդիսացող թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց բաղադրիչների, հրազենի, դրա հիմնական մասերի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի և պայթուցիկ սարքերի փոխանցման կարգի մասին» արձանագրության վավերացման վերաբերյալ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Invalid signature

X

VERIFIED OCSP 4/25/2019 15:33:14 GMT+4

Signed by: ANANYAN DAVIT 2010710142

ԴԱՎԻԹ ԱՆԱՆՅԱՆ

Կատ. Միջազգային համագործակցության վարչություն
Արփինե Գրիգորյան
Հեռ. 060544341

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ

Երևան-1, Նալբանդյան փ. 104

«16» 04 2019 թ. № 11/344

Օր. ...

ՀՀ ոստիկանության պետ,
ոստիկանության գնդապետ
Վ. ՕՍԻՊՅԱՆԻՆ

Ձեր 29.03.2019թ. N 01/2/8390-19 գրության

Հարգելի պարոն Օսիպյան

<<Քրեական գործերով իրեղեն ապացույց հանդիսացող թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց բաղադրիչների, հրազենի, դրա հիմնական մասերի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի և պայթուցիկ սարքերի փոխանցման կարգի մասին>> արձանագրության վավերացման վերաբերյալ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունն առարկություններ չունի:

Հարգանքով՝
գնդապետ Ա. ՎԱՆԵՑՅԱՆ

4011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ ՏԵՂԱԿԱԼ

0010 ք. Երևան, Վ.Սարգսյան փ. 5
Էլ. փոստ d.melkonyan@prosecutor.am

ՀՀ ոստիկանության պետ, ոստիկանության
գնդապետ պարոն Վ. Օսիպյանին

Ի պատասխան Ձեր՝ 29.03.2019թ.
01/2/8389-19 թվակիր գրության

Հարգելի պարոն Օսիպյան,

ՀՀ գլխավոր դատախազությունում ուսումնասիրվել է «Քրեական գործերով իրեղեն ապացույց հանդիսացող թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց բաղադրիչների, հրազենի, դրա հիմնական մասերի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի և պայթուցիկ սարքերի փոխանցման կարգի մասին» Արձանագրությունը: Արձանագրության վավերացումը դիտարկվում է նպատակահարմար:

Հարգանքով՝

Արդարադատության առաջին
դասի խորհրդական **Դ. Մելքոնյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 011-59-72-07. Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

Ձեր №

№

«____»_____2019 թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲԻ ՊԵՏ,
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ
ՊԱՐՈՆ ԱՐՄԵՆ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղուկասյան,

Ի պատասխան Ձեր 2019 թվականի ապրիլի 9-ի թիվ 2/2/9079-19 գրության և հիմք ընդունելով «Միջազգային պայմանագրերի մասին» 2018 թվականի մարտի 23-ի թիվ ՀՕ-213-Ն ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ ենթակետը՝ կից ներկայացնում ենք «Քրեական գործերով իրեղեն ապացույց հանդիսացող թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց բաղադրիչների, հրազենի, դրա հիմնական մասերի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի և պայթուցիկ սարքերի փոխանցման կարգի մասին» Արձանագրության վերաբերյալ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի եզրակացությունը:

Առդիր՝ 1 էջ:

Invalid signature

X

VERIFIED OCSP 4/19/2019 11:47:45 GMT+4

Հարգանքով՝ Signed by: BABAYAN ALBERT 1501860402

ԱԼԲԵՐՏ ԲԱԲԱՅԱՆ

ԵԱՏՄ և արտաքին առևտրի վարչություն
011 597213

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ

0010, ք.Երևան, Տիգրան Մեծի պող.4
Հեռ. 011 50 11 50, ֆաքս 011 52 97 53
Էլ. փոստ. info@spm.am
Կայք. www.spm.am

Ձեր № 15.4/[190411]-19
11.04.2019թ.

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ
ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Կարապետյան

Ի պատասխան Ձեր գրության՝ հայտնում եմ, որ «Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենքի կարգավորման շրջանակում «Քրեական գործերով իրեղեն ապացույց հանդիսացող թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց բաղադրիչների, հրազենի, դրա հիմնական մասերի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի և պայթուցիկ սարքերի փոխանցման կարգի մասին» արձանագրությունով Հայաստանի Հանրապետության համար գույքային պարտավորություններ նախատեսող դրույթներ առկա չեն:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՆԻ ՕԲՈՍՅԱՆ

Invalid signature

X

VERIFIED OCSP 4/16/2019 16:16:21 GMT+4

Signed by: OBOSYAN ANI 5801780084

Կատարող՝ Սարգիս Լալայան
Հեռ. 011 52 63 89